



Ա. ՏԵՌ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Միշին դարերում հայ մատենագրությունը տարբեր քննութիւն առնչություններ է ունեցել արար մատենագրության հետ: Սույն հոդվածում նպատակ ունենք անդրադառնալ հրա մի ճյուղին՝ քրիստոնյա արարական մատենագրության՝ առնչությունները հայ միջադարյան գրականության հետ:

Հետանու արարենքի բանավոր գրուցների հետ զուգահեռ Դ—Է դարերում Արարիայում ծննունդ է առնում քրիստոնյա արարական մատենագրությունը: Փորձեր են եղել Աստվածաշունչը արարերենի թարգմանելու, իսկ, բացի դրանից, Զ դարում եղել են քրիստոնյա արար (բեղվին) բանաստեղծներ, մանավանդ Հիրայում (Միջագետքի հարավում):

Մահմեդականության առաջացումից և խալիֆայության կազմավորումից հետո քրիստոնյա արար մատենագրությունը նեղ սահմաններում իր գոյությունը պահեց Է—Ը ուրերում: Դեռ կային քրիստոնյա արար բանաստեղծներ, ինչպես օրինակ Ամիսալը, որը հաճախում էր օմայան արքունիք խաչը զգին կախած:

Խալիֆայության տիրապետության տակ քրիստոնյա բեղվին արարենքը հիշյալ դաս-

¹ Քրիստոնեական արարական մատենագրությունը հայկական, վրացական, ասորական, դպրուական և եթովական գրականությունների նման ամենասերտ առնչության մեջ էր բյուզանդական մատենագրության հետ: Նա ըստ էության եղել է ասորական և դպրուական գրականությունների շարունակությունը արարենք լեզվով:

րերում աստիճանաբար քայլավեցին, ասկայի հրանց փոխարեն երևան եկավ արարացած ասորիների և արարացած դպտիների զանգվածը, որը բաղկացած էր հինգ եկեղեցական համայնքներից՝ մելքիս (հունարավան), հակորիկ (միաքնակ), նետորական, դպտի և մարոնի: Ըստ այս համայնքների էլ գոյացան հինգ գրական ճյուղեր կամ հոսանքներ, որոնք թեև մասամբ անշատ էին իրարից, բայց միաժամանակ ունեին ընդհանրություններ: Հիշյալ համայնքներից ամեն մեկը գրեթե մինչև ուշ միջնադար ունեցավ երկեղու մատենագրություն, ընդ որում արարացած ասորիները (հակորիկ և այլն) գրում էին ասորեն և արարենքն, մելքիտները՝ հունարեն և արարերեն, իսկ դպտիները՝ դպտերեն և արարերեն²:

Քրիստոնյա արարական մատենագրությունն ըստ էության սկիզբ առավ Թ դարում, և նոր հիմքը դրվեց թարգմանություններով: Աստվածաշնչի որոշ մասեր թարգմանվել են հունարենից և ասորերենից: Ժ դարի արար մատենագիր Իրն ալ-Նադին իր «Ֆիրիստ» կոչված հանրագիտական աշխատության մեջ հիշում է Աստվածաշնչի մի քանի արարենքն թարգմանություններ:

Արարենքն տարածվեց նաև հրեաների միջավայրում, և արդեև Թ—Ժ դարերում

² Մենք չենք անդրադառնում Սպանիայի մողաքաբերին՝ քրիստոնյա արարախոս համայնքի մատենագրությանը, որը զարգանում էր արարերեն և լատիներեն լեզվունով:

ծաղկեց նաև հրեական արարավեզու մատենագրություն։ Հրեա Աշանավոր մատենագիր Սահի իր Յուսուֆ ալ-Ֆայյումին (892—942), որը հայտնի է Սաստիա Գառն անվամբ, երրայրենից արաքերենի թարգմանեց Հին Կտակարանը, որը մինչև օրս կանոնական թարգմանություն է համարվում։ Միա կողքին եղել են նաև Աստվածաշնչի (Հին և Նոր Կտակարանների) թարգմանություններ ոչ միաց հունարենից, այլև ասորերենից ու պատերենից³։

Հետաքրքրական է և բազմատեսակ արաքերենի թարգմանված եկեղեցական հայրերի մատենագրությունը⁴, որն ընդգրկում է հոյն, ինչպես նաև ասորի, դասի և հայ մատենագիրների երկեր։ Քրիստոնեական արարական մատենագրություններ իր հիմնական սկզբնը ստանում է բյուզանդական մատենագրությունից։ Հոյն մատենագիրներից թարգմանվել են Արքանա, Եվուսիոն Կեսարացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նորմացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Հովհաննեսի Ռուկերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու և այլոց գործերը։ Ասորերենից թարգմանվել են նեստորական և հակորիկ մատենագիրների գործեր։

Հայ մատենագրությունից մեծ շափով թարգմանվել է Ազգաբանգեղոսի պատմությունը, որը, ինչպես հայտնի է, համաշխարհային տարածում է ունեցել դեռ վաղ միջնադարից սկսած։

Թ.՝ Ժ դարերում ծաղկեց քրիստոնյա արարական ինքնուրույն մատենագրությունը (ջատագովություն, մեկնություններ և մանավանդ պատմագրություն), և այս գործում մեծ դեր կատարեցին մելքիտները։ Քաղկեդոնական (Երկարնակ) ուսումնքն ընդունած և բյուզանդական պատունական եկեղեցուն հարած Անիորի պատրիարքությունը⁵ արարական տիրապետության շրջանում (638—969) պահպանեց իր հեղինակությունը, թեև երա պատրիարքը չկարողացավ նեստորական կայսողիկութիւն հայվար դիրք գրավել հայի ֆարության մեջ։ Մելքիտների կարևոր կենտրոններն էին Երուսաղեմի և Ալեքսանդրիայի պատրիար-

³ Արարավելու հրեական մատենագրությունը երրան գրվում էր նաև երրարական տառերով։ Սահմանայի արարավելու հրեա մատենագիրներից հայտնի են Բեն Գաբրիոլը և հառլաւի Մայմոնիդեաը (իր Մայմոն)։

⁴ Ph. Hitti, History of the Arabs, London 1958, p. 354.

⁵ G. Graf, Geschichte der Christlichen arabischen Literatur, I, Vatican, 1914. S. 298—302.

* Hitti, p. 355.

բույյունները, իսկ մշակութային հայտնի կենտրոն էր և Արմենի վանքը Անտիոքի մոտ։

Առաջին մելքիտ աշքի ընկերող արարական մատենագիրը (Թ դար) Թեղողորոս Արու Կուրրան է (հայ մատենագրության մեջ՝ Ապիկուու)։ Դատապահ Խառանի հայկոպոս, նա սկսեց պայքար ծավալել Հայաստանում, ձգտելով համոզել հայոց իշխան Աշոտ Մասկեր Բագրատունուն ընդունել բաղկեղունականությունը։ Սակայն նա հաջողության շնասավ, բանի որ նա կեղծեցին և հակորիկ ասորիները համատեղ դիմադրեցին նրան։ Նա ունի դայականարական գրվածքներ, որոնք ծանոր են բյուզանդական մատենագրության մեջ։

Ժ դարում հայտնի է Կոստա իր Լուկա ալ-Բատթարին, որն այցելել է Հայաստան և վայելել Վասպորականի Արքունիքների հովանավորությունը։ Հայոց (Բագրատունյաց) թագավորության առկայությունը նպաստվոր երևուց էր քրիստոնյա արաքերի և նոյնիներ երկարնակ մելքիտների համար։

Կոստային ժամանակակից է Ակերասիդիքայի մելքիտ պատրիարք Եվստիքիսոս կամ Սահի իր ալ-Բատթարիկը⁶ (877—940)։ Նա հայտնի է իր ժամանակագրությունների նախողությամբ, սկսելով հնագույն դարերից մինչև 938 թվականը։ Նոյն ժամանակի պատմիչ է Ազգապիոս կամ Մահրուր իր Կոստանդրին ալ-Մանթիշին։ Սա նոյնպես ունի ժամանակագրություն, որն սկսում է աշխարհի արարագործությունից և հասցնում մինչև իր օրերը։

Քրիստոնյա արար պատմիչների շարքում առանձնապես հայտնի է ԺԱ դարի մատենագիր Յանիա (Յունանա) իր Սահի իր Յանիա ալ-Անթարին (Անտիոքացի)։ Նրա «Քիտար ալ-Զալլ» (Հավելված) կոչված մատյանը Եվստիքիոսի ժամանակագրության շարունակությունն է և արժեքավոր տեղեկություններ ունի Բրուգանիֆայի և Հայաստանի պատմության վերաբերյալ։

ԺԱ.—ԺԲ դարերում իրենց գործունեալ աշքի ընկան Անտիոքի մոտ գտնվող և Արմենի վանքի միաբանները⁷: Բյուզանդական տիրապետությունից (969—1094)

⁷ Հ. Երևան Վ. Ապիկեան, Թեղողորոս Ապիկուու և Նանս ասորի, Մատենագրական հետազոտություններ, Բա. Ա., Վիճանա, 1922, էջ 115—163։

⁸ Քրիստոնյա արար մատենագիրները նաճախ միշտում են նոյն ինաւոն ունեցող երկու ձևով՝ Անտիոք և Արարական։ Օր. Ազգապիոս և Մահրուր (Արքական), Եվստիքիոս և Սահի (Արքանիկ)։

* Graf, II, S. 30—51.

հետո Անտիոքը ընկավ նախ սեղուկների և ապա խաչակիների տիրապետության տակ: ԺԳ—ԺԴ դարերում ընկելով Եգիպտոսի մամլուքների ձեռքը, անկում ապրեց, իսկ պատրիարքարանը տեղափոխվեց Դամասկոս: Դրանից հետո մերժիտ մատենագիրների մեջ կարևոր դեմքեր չեն երևում, զարգանում է ոչ թե պատմագրությունը, այլ սուկ դավանարանական գրականությունը:

Մելքիտները հատուկ հետաքրքրություն են ցուցաբերել Ագաթանգեղոսի պատմության նկատմամբ, որի լավագույն պատցուցն է նրա մի քանի արարերեն և հունարեն ձեռագիրի առկայությունը Սինայ և Կատարինեի (Եգիպտոս) հայտնի վանքում: Ն. Մատը 1902 թվականին հիշյալ վանքում հայտնաբերեց Ագաթանգեղոսի մի նոր, դեռ անհայտ, խմբագրության (այժմ կոչվում է «Վարք») արարերեն օրինակը (պակասավոր): Մանրամասն քննարկման ենթարկելով այս տարրերակը, Ն. Մատը ցույց տվեց, որ սա ինքնուրույն խմբագրություն է: Այս նույն խմբագրության մի այլ արարերեն ձեռագիր ևս հայտնաբերվել է նույն վանքում¹⁰: Վերջինս ամբողջական է և պարունակում է այն սկզբանական հատվածը, որը պակասավոր է Ն. Մատի գտած ձեռագրում:

Երկրորդ աշխարհամարտից հետո մելքիտների և Կատարինե վանքում հայտնաբերվել են նաև Ագաթանգեղոսի պատմության մեջ հայտնի խմբագրության արարերեն թարգմանությունը, որը կատարված է Ագաթանգեղոսի հունարեն թարգմանությունից¹¹: Այս արարերեն թարգմանության համեմատությունը հունարեն և հայերեն բնագրի հետ ցույց տվեց, որ սա թարգմանված է մի հունական օրինակից, որը շատ ավելի մոտ է եղել հայկական բնագրին, քան հունարեն Ագաթանգեղոսի մեջ հայտնի որևէ մի ձեռագիրը: Արարերեն թարգմանությունը հավանաբար կատարված է Թ—Ժ դարերում:

Մելքիտների մատենագրության հետ միաժամանակ Թ դարում հանդես եկան հակորդիկ աստրիների արարերեն ստեղծագործությունները: Դրանց առաջին հայտնի մատենագիրը Տաքրիտի եպիսկոպոս Հա-

¹⁰ H. Я. Marr, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб, 1905.

¹¹ Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արարական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիր, «Պատմա-բանահրական հանդես», 1973, № 1, էջ 209—287:

¹² Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արարական նորահայտ ամբողջական բնագիր, Երևան, 1968:

թիր իրն Խիդմա Արու Ռայթան է¹³, որի գործերը դավանարանական բովանդակություն ունեն ուղղված մահմեդականների, հրեաների և մահավանդ մելքիտ եկեղեցու շատագով Թեոդորոս Արու Կուրրայի դեմ: Այս պայքարի թատերաբեմը, ինչպես տեսանք, դարձավ Հայաստանը, որի հշիան Աշոտ Սամելի Բագրատունու խնդրանքով Արու Ռայթան Մծրինից Հայաստան ուղարկեց Խանական սարկավագին: Սա Թեոդորոսին բանավեճում հայտելուց հետո Բագրատ Բագրատունու (հշիանաց հշիան) օրոք և նրա պատվերով գրեց Հովհաննու Ավետարանի արարերեն մեկնությունը, որը հետագայում հայերենի թարգմանվեց¹⁴:

Հակորդիկ աստրիները որոշ մասնակցություն ունեցան այն թարգմանական (հունարենից արարերեն) մեծ աշխատանքին, որը նեստորականները կատարում էին խալիֆայության մեջ: Հայտնի է Արդ ալ-Մասիհ իրն Խահմա ալ-Հիմսին, որը Թ դարում թարգմանություններ կատարեց Արիատոտելից:

Հարուստ ժառանգություն է թողել Ժ դարի հակորդիկ մատենագիր Արու Ջաքարիա Յահին իրն Ալի ալ-Ֆարիտին, որն իր փիլիստիական և դավանարանական գրվածքներում բանավիճում է մահմեդական փիլիստիաների հետ: Ժ դարի վերջի մատենագիր է Արու Ալի հայ իրն Զորան, որը հայտնի է իր դավանարանական գրվածքներով:

ԺԳ դարում, երբ ապրել է երևելի պատմիչ Միքայել Ասորին, երևան է եկել նաև արարակեզր աստրի մեծ պատմիչ Գրիգորիոս Արու-Լ-Ֆարազ իրն ալ-Իբրին (Բար Հերբերոս):¹⁵ Ծնվել է 1225-ին Մելքիտներում, եղել է եպիսկոպոս և վերջապես Մափրիան (պատրիարքի տեղակալ): Մահացել է Մարտաղյում 1286-ին: Նրա ամենահայտնի աշխատությունն է «Տարին մովստասար ալ-դուվալ» (Պետությունների համառու պատմություն), որը տալիս է թե՛ հին դարերի, թե՛ միջնադարի (Բյուզանդիա, խալիֆայություն և այլն) պատմությունը¹⁶: Հետաքրքրական են նրա տեղեկությունները Կիլիկիայի հայկական թագավորության մասին: Բար Հերբերոսը արար պատմագրության մեջ երևելի դեմք է և քրիստոնյա արար մատենագիրներից ամենահայտնին լինիանուր արար մատենագրության մեջ:

Հակորդիկ աստրիները հետաքրքրվել են

¹³ Graf, II, S. 222—226.

¹⁴ Նամակի Ասորուց կարդապետի մեկնութիւն Ցովհաննու Անտարամին, Վենետիկ, 1920:

¹⁵ Graf, II, S. 272—281.

¹⁶ A. S. Atiya, A History of Eastern Christianity, London, 1968, p. 204—208.

նայ մատենագրությամբ և թարգմանել որոշ գործեր: Մեզ հնատէ է Վարդան Այգեկցու Աղվեսագրքի ասորատան արարերեն (բարշունի) թարգմանությունը¹⁷: Մանակութիւնը թնձելով Այգեկցու առակները և այն համեմատելով արարերեն առակների հետ Ն. Մառը ցոյց տվեց, որ հնատերենն է բընագիրը, իսկ արարերենը՝ նրա թարգմանությունը:

Հակոբիկ ասորիների միջավայրում կատարված թարգմանությունն է այն ձեռագիրը, որ 1971 բավականին լույս ընծածեց Մ. վան Էսբրուը¹⁸: Ջեռագիրը գրիստ է ասորատան արարերեն (բարշունի) և այս պատճառով էլ այն բանափրոքան մեջ մտավ Քարշունի վարը անունով:

Ուսումնասիրելով այս նորահայտ ձեռագիրը (գտնվում է Երևանի ասորիների վանքում) Մ. վան Էսբրուը եզրակացրեց, որ այս արարերեն թարգմանությունն իր հիմքում պետք է ունեցած լինի մի ասորերեն բնագիր, որու իր հերթին պետք է հայերենից թարգմանված լինի: Բարեքախտարար մի բանի տարի անց նա հայտնարերեց նաև ասորերեն բնագիրը:

Քարշունի վարը ինքընուրույն է իր բովանդակությամբ: Նա ոչ միայն նոր հոլովեր ունի (Թաղեռոսի գրուցք և այն), այլև Ագարանգեղոսի պատճերյան մեջ եղած սովորական նորություն մեջ էլ՝ շեղուներ:

Եթեն մերժիտները և հակոբիկները փայլեցին պատճագրության և շատագովության ասպարեզում, ապա նեստորականները¹⁹ աշքի ընկան զիտության ասպարեզում կատարած ծառապություններով: Նեստորական ասորիները պատճական մեծ դեր խաղացին նպատելով արարական մշակութային զարթունիքի շարժմանը (մանավանի թղարի առաջին կետում) և զիտության ծաղկմանը:

Բացատիկ դեր կատարեց, օրինակ, Բախսիշու ընտանիքը²⁰, որը Ը—ԺԱ. դարերում սերնից սերունդ վարում էր Արքական արքունիքի պալատական բժիկի պաշտօնը: Նրանք նախապես գործում էին Գունդիշապուրում, որ դեռ Խոսրով Ա. Անուշիրվանի ժամանակից կար հիվանդանոց և բժշկա-

կան կամա: Զորջիս իրն Բախսիշուն (մեռ. 771) Մանուր խալիֆայի հրավերով տեղափոխվեց Բաղրադ, և նրանից հետո Բաղրադում ժառանգարար գործում էին նրա հետնորդները: Սրանք միաժամանակ իրենց ոստունասիրություններով նպաստեցին բժշկական զիտության զարգացմանը և հունական բժշկությունը արարերենին ծանրացնելուն:

Թ դարի առաջին կետում, մանավանի Մամուն խալիֆայի օրոք (813—833), տղի ունեցավ հունարենից արարերեն թարգմանությունների մի ուժու շարժում, հովանափորված հենց արքունիքի կողմից: Շարժումը նրա իրավանացավ ասորիների զիտական գործունեության շնորհիվ, բայց վճռական դեր խաղացին նեստորականները: Արդ Զաքարիյա Յոհաննա (Յահիա) իրն ալ-Քիթբիկը թարգմանիչ կոչեցաւ, Մամունի օրոք թարգմանել է Արքատունի, Գալենի և Հիպոկրատեսի գործերը:

Նեստորական թարգմանիչների մեծագույն դեմքը Հունացի իրն Խոմանէն է²¹ (809—873), որը ծնվել է Հիրամում, սովորել Բաղրադում բժշկական երկերի հայտնի թարգմանիչ Յոհաննան իրն Մասավայի մոտ: Ուսումնասիրել է հունարենը և հայունի դարձել որպես բժիկ: Մամուն խալիֆայի հովանափորված տակ, որը Բաղդադում հիմնել էր Բայս ալ-Հիրմա (իմաստության տուն) մատենադարան թարգմանական կենտրոնը: Հունացն իր որդու՝ Խոմակի և Խերորորու հետ լայն գործունեություն ծավալեց, ընդ որում նա թարգմանում էր հունարենից ասորերենին, իսկ որդին՝ ասորերենից արարերենի: Թարգմանիչներին Գալենի, Հիպոկրատեսի և Դիոսկորիդեսի գործերը, Պատունի Հանրապետությունը (Սիրիա), Արքատունի կատեգորիաները (Մակարան), բնագիտությունը (թարթիլյան) և այլ աշխատությունները:

Նեստորական արարակեզրու մատենագրության մեջ, դավանաբանական ասպարեզում, հայտնի է Տիմորենու Ա. Կաթողիկոսը իր «Բանավեճ Մանի խալիֆայի հետ» աշխատությամբ: Արդ ալ-Մասին ալ-Քինին գրել է շատագովություն ի պաշտպանություն քրիստոնեության ընդդամ մահմետականության²²: Այդ ժամանակ երևան եկավ «Բանիրայի գրուցք», ըստ որի այս քրիստոնյա վանականն է Պորամի հեղինակը: Այս գրուցք հայտնի է նաև նայ պատմիչների մոտ:

Ժ դարում նեստորականների արարերեն գրական գործունեությունը շարժունակվեց

¹⁷ Hitti, p. 312—314.

²² Graf, II, S. 114—118.

¹⁸ Ժողովածոք ստական Վարդանայ (ըստ Նիկոլայ Մառի) տեղեկութիւն և բաղուածք, գրեց Հ. Ա. Տաշեան, Վիեննա, 1900, էջ 11—15:

¹⁹ M. van Esbroeck, Un nouveau témoignage du livre d'Agathange, Revue des études arméniennes, t. VIII, Paris, 1971, p. 13—167.

²⁰ Նեստորականների մանագությունը այժմ կոչվում է բաղդադացիք (Քիլամի):

²¹ Graf, II, s. 109—112.

տալով դավանարանական, և եզրական (արքերեն-ասորերեն բառարա) և այլ բընույթի գրվածքներ: ԺԲ—ԺԳ դարերում իր ծաղկման վերջին շրջանն ապրելուց հետո նեստորականների գրական գործունեությունը դեպի անկում է ընթանում:

Նեստորականները համեմատարար ավելի քիչ են հետաքրքրվել հայ մատենագրությամբ, քան վերոհիշյալ համայնքները: Մեզ հասել է մի փոքրիկ հատված «Նեստորական պատմության» (Սղերդի ժամանակագրություն)՝²³ մեջ, որը հակիր ձևով պատմվում է, թե ս. Գրիգորը, փախելով Դիոկղետիանոսից, ապրում էր Հայաստանի լեռներում: Հայունարքերելով նրան, Հայոց թագավորը առաջարկում է աստվածներին զոհ մատուցել, քայլ մերժում ստանալով գոռում է նրան սողուններով լի նորի մեջ: Վերջապես դրու բերվելով նորից ս. Գրիգորը նոր կրոնը տարածում է ամրող երկրում: Այս փոքրիկ հատվածը տալիս է հետաքրքրական հյութեր, որոնք կարևոր են Սպահանգեղոսի բնագրի ուսումնասիր ման համար:

Այլ միջավայրի ծնունդ են դպտիները՝ Եգիպտոսի քրիստոնյա բնիկները: Ասորիքի և Վերին Միջագետքի քրիստոնյա ազգարնակչությունը՝ մելքիտներ, հակոռիկներ, նեստորականներ և մարոնիներ, ունեն ոչ միայն ընդհանուր աշխարհագրական միջավայր, այլև մասսամբ ցեղային (ասորի) ծագման ընդհանրություն: Այսուհանդեռ Եգիպտոսի արարացած դպտիները նոյնպես որոշակի ընդհանրություններ ունեն Ասորիքի ու Վերին Միջագետքի արարացած ասորիների հետ: Եգիպտոսի դպտիների մեծամասնությունը կազմող միարնակները սերտ կապի մեջ են Ասորիքի հակոռիկների հետ, իսկ հումադավան դպտիները՝ մելքիտների հետ:

Արարացած դպտիները ստեղծեցին ինքնուրույն և հարուստ մատենագրություն: Նրանց մոտ զարգացավ պատմագրությունը, դավանարանական գրականությունը, եզրի ուսումնասիրությունը, եկեղեցական իրավունքը և այլն:

Եգիպտոսի առաջին²⁴ հայտնի քրիստոնյա

²³ Addal Scher, Histoire Nestorienne (Chronique de Séert) Patr. Or., Paris, 1908. p. 217.

Հ. Մերոնյան. Հայ ասորական նարարերությունների պատմությունը, Երևան, 1970, էջ 188—189:

²⁴ Եգիպտոսում առաջին արարակեզրու քրիստոնյա մատենագիրը գույն համարվել Սահի իր ալ-Բիթրիկը՝ Եվլիքիոս մելքիտ պատրիարքը, քայլ քանի որ քրիստոնյա արար մատենագրության դպտական հյութը գլխավորական միարնակների ատեղծած գրականությունն է, ապա նա թիշվում է ասորի մելքիտների հետ:

արար մատենագիրը Աներու իր ալ-Մուկաֆֆան է, որը հայտնի է Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության մասին իր մեծ աշխատությամբ: Սա կարևոր աղբյուր է ոչ միայն Եգիպտոսի, այլև նուրիայի և Եթովպահայի եկեղեցիների և պատմության ուսումնասիրման համար²⁵:

Ֆաթիմյան ժամանակաշրջանում (969—1171) ղատիների արարակեզրու մատենագրությունը ծաղկում ապրեց: ԺԲ դարում է կազմավորվել «Հարանց խոստվանություն» (Խոհրափ ալ-Աքրա) կոչված ժողովածուն, որը միարնակ եկեղեցիների համար կարևոր գաղափարական հշանակություն ուներ: Ալստեղ կա նաև մի փոքրիկ հատված Ագաթանգեղոսի պատմությունից (ս. Գրիգորի աղոթքը)²⁶:

ԺԲ դարի վերջի և ԺԳ դարի սկզբի մատենագիր է հայազգի Արու Սալին ալ-Սրմանին, որը հեղինակն է Եգիպտոսի եկեղեցիների ու վանքերի պատմության: Այս աշխատությունը Հ. Ղ. Ալիշանի²⁷ կողմից թարգմանված է հայերեն՝ ուսումնասիրությամբ հանդերձ:

Արարակեզրու գրականությունը Եգիպտոսում ամենափայլուն շրջանն ապրեց ԺԳ դարում (Ալյուրյանների և առաջին մամլուքների ժամանակաշրջանում): Հատկապես աչքի ընկնող անձնավորություն է ալ-Մարին Զիրշիս կոչեցալը «իր Ամիդ», որը գրել է պատմական մեծ աշխատություն ալ-Մարզու ալ-Մուրարաք (օրինյալ ժողովածու)՝²⁸, սկսելով աշխարհի արարացագործությունից և հասցենությունների է տալիս: Նրա աշխատությունը հետագայում օգտագործել է հշանավոր մահմեդական պատմիչ Մակրիզին (1364—1442), մանավանդ Եգիպտոսի քրիստոնյաների մասին տեղեկություններ քաղելու համար: Այս ժամանակաշրջանում իր մեկնողական և դավանարանական գրպահքներով հայտնի է հայազգի Բուլթրուս (Պետրոս) ալ-Սահամանի ալ-Սրմանին²⁹:

ԺԳ դարում հայտնի դարձան Ասսալ եղբարները, որոնք պետական տեսչություններում քարտուղարներ են, և նրանցից հայտնի է Արու Խսիակ Խրամին իր ալ-

²⁵ Graf, II, S. 300—317.

²⁶ G. Garitte, Documents pour l'étude de l'île d'Agathange, Vatican. 1946, p. 402—403.

²⁷ Արուամի հայ, Պատմության եկեղեցեաց և վանրէից Եգիպտոսի, Վանեատիկ, 1895:

²⁸ Graf, II, S. 450—453.

²⁹ Graf, II, S. 351—356.

Ասսավը, որի ունի ղատերեն-արաքերեն բառարան և մանավանդ ղալանարանական մի մեծ գործ՝ Մաշտու ուսուզ ալ-Դին (կրոնի հիմունքների ժողովածու): Այստեղ նիշվում են բազում եկեղեցու հայրեր, որոնց մեջ է նաև Գրիգոր Լուսավորիչը:

Նոյն դարից մեզ հասել է նաև Բուրյուս ալ-Ռամիրին (Պետրոս վաճական) վերագրվող պատմական աշխատությունը և Արուլ-Բարաքատի ղալանարանական հանրագիտարանը, ինչպես նաև ղատերեն-արաքերեն բառարանը:

ԺԴ—ԺԵ դարերը (մամլուքյան ժամանակաշրջանը) եղավ մատենագրության անկանան ժամանակաշրջան, երբ այլև գրական կարևոր գործեր երևան չեն գալիս:

Ղափիների արաքալեզու մատենագրությունը մեծ շափով թարգմանվել է երուսակերեն, և հայլանարար այս ճանապարհով է, որ Ազգանագեղոսի պատմության արաքերեն խմբագրությունները ծանոթ են դարձել երուսակացիներին:

Ղպտի մատենագիրները լավ ծանոթ են եղել Ազգանագեղոսի պատմության ու Գրիգոր Լուսավորչին և համայն հիշել են իրենց գրքերում: Սակայն մեզ ծանոթ միակ ամբողջական շարադրանքը, որը ղպտական միջավայրից է, արաքերեն համառոտ վարքը է Ժ. Գարիսի կողմից հայտնաբերված Կամիրեի ղպտական թանգարանում գտնվող ԺԴ դարի ձեռագրում³⁰: Բնագրի ուսումնասիրությունից Ժ. Գարիսը եզրակացնում է, որ սա հունարեն Ազգանագեղոսի համառոտումն է: Սակայն, ելելով լեզվական որոշ հատկանիշներից, նա եզրակացնում է, որ հայուսն շարադրված է եղել ղպտերեն, ապա թարգմանվել և արաքերենին: Այս համառոտ վարքը նեղինակը իր ուշադրությունը կենտրոնացրել է Գրիգորի անձնալորության վրա, ձգտում է շատ դեպքեր նրա անվան հետ կապել: Տրդատի խոզացման պատճառը ոչ թե Հոփիսիմյան կուսերի համատակությունն է, այլ Գրիգորի խոր վիրապ նետվելը, կամ Նիկուայի ժողովը է գնում ոչ թե Արիստոկրատը, այլ Գրիգորը և այլն:

Ուշ միջնադարի բրիստոնյա արար մատենագրության մեջ փոփոխություններ են կատարվել: Վաղ միջնադարում այնքան կարևոր դիրք գրավող նեաստորականները և հակոբիկ աստրիները արդեն շատ են էին մնացել, իսկ ամենահետին տեղում գտնվող Լիքանանի մարոնիները արագորեն զարգացան և արաքալեզու նոյն գրականությունն

³⁰ Ա. Տեր-Ղևոնդյան, Ազգանագեղոսի նորամատ արաքերեն համառոտումը, «Էջմիածին», 1961, 2, էջ 27—32:

տևելութեցին: Նրանք շփման մեջ են Ելիուայի, մանավանդ Խոսկիայի հետ, որ արաքերեն բազմաթիվ գործեր են տպվում Հովհան Արոտի շանրերով:

Մարոնիների առաջին ակնառու դեմքը Զիրքայի ալ-Կուլային է (մատ. 1515), որի աշխատությունների մեջ շարադրված է մարոնիների պատմությունը: Մարոնիների խկական զարգացման շրջան ԺԷ դարն էր, որի երկրորդ կեսում հանդիսանում է կայ Խոփիան ալ-Դայահին ղարձալ մարոնիների բազմահատոր պատմության հեղինակ: Նրան մասամբ ժամանակակից է Զիրքայի Զիրմանու (Գարբիել Գերմանու) Խարբատը³¹ (1670—1732), որը հայտնի է որպես արաքան բանասիրության մեծ գիտակ և ուժի արաքերեն քերականությունն, բասարան, հոնառությունն և այլն³²:

Մարոնիների միջավայրում հայ մատենագրության նկատմամբ հետաքրքրության մի հետու է այն արաքերեն համառոտումը, որի ձեռագիրը գտնվում է Բեյրութի ֆրանսիական համալսարանի մատենադարանում: Սա արաքերեն համառոտումն է Անտոնիո Բոնուկիի խոպերեն մշակման:

Բոնուկիի³³ մշակումը գեղարվեստական չէ, այլ ղալանարանական վեճերի համար կազմված մի շարադրանք, որ ի մի են բերված Գրիգոր Լուսավորչի մասին եղած բազում աղյուրների տեղեկությունները: ԺԷ դարի սկզբին ի հայու եղած այս գործը հենց նոյն դարում հայու թարգմանվել է հայերենի և ապա ունեն մարոնի կրոնավորի ձեռուով խոպերենից համառոտ թարգմանվել արաքերենի:

ԺԸ—ԺԸ դարերում Աստրիբում ատեղծվում է նաև արաքախոս (հոնունադպահան) հայերի արաքալեզու մատենագրությունը³⁴: Թեև միջին դարերում, ինչպես տեսանք, եղել են առանձին հայագի արաքալեզու մատենագիրները (օր. Արտ Սալիմը), այ-

³¹ Graf, III, S. 406—428.

³² Արևունագիտության մեջ բացառիկ նոշակ է վայկու մարոնի Բոտով իր Ծիմոն ալ-Միմոնի (Ժողով Սիմոն Ասամանի, 1687—1768), նաև կայ կայ նոշակ է նրա արևունագիտությունը: Մատենագրության 12 հասորանց լատիներեն պատմությունը (Bibliotheca Orientalis) և Վատիկանի ձեռագրերի 20 հասորանց նկարագրությունը: Ասամանի ընտանիքը տվել է նաև այլ կարկանոններկանցությունը:

³³ Ա. Տեր-Ղևոնդյան, Ազգանագեղոսի պատմության Անտոն Բոնուկիի մշակումը և նրա արաքերեն համառոտ թարգմանությունը, «Էջմիածին», 1976, Ե, էջ 45—50:

³⁴ Graf, IV, S. 82—93.

սուհանդերձ, մի ամբողջ գրականություն չի եղել:

Այս մատենագրությունը սկիզբ առավ ժԵ՝ դարի վերջին և ԺԸ դարի սկզբին, և նրա առաջին կարևոր դեմքը Մկրտիչ ալ-Քասիմ էր, որից հետո ԺԸ դարում հիշվում են Աբրահամ Արծիվյանը, Հակոբ Յուսիֆյանը և ուրիշներ:

Դավանաբանական, պատմական և այլ բնույթի գործեր տվել են նաև ԺԸ դարի առաջին կեսի հետինականեր Գաբրիել Հայոհը, Իբրահիմ Քուրալին, Անտոն Խանջին և ուրիշներ:

Այսպիսով, հայ մատենագրության առն-

շությունները քրիստոնյա արաբականի³⁵ հետ տևեց մոտավորապես մեկ հազարամյակ, որի ընթացքում հիմնականում հայ մատենագրությունն էր, որ փոխ էր տակի քրիստոնյա արաբականին (Ագաթանգեղոս, Աղվեսագիրք), իսկ ինքը վերջինից քիչ բան է փոխ առել:

³⁵ ԺԸ դարի երկրորդ կեսից արդեն վերանում է արաբական երկու (մահմետական և քրիստոնյա) գրականությունների սահմանազատումն ըստ համազեների և խովում է մեկ ընդհանուր արաբական գրականության մասին:

